

Call-Center

SMS



RBT

Push
messages

Viber

IVR

Charity



ՆԻԿԻՏԱ ՄՈՐԱՅԼ ՍՊԸ

Նիկիտա Մորայլ ընկերությունը հիմնադրվել է 2006թ. հունիսի 21-ին: Գործունեություն է սկսել ծավալել 2007 թ. հունվարից և մինչ այսօր հայկական շուկայում գրավում է առաջատար դիրք:

Նիկիտա Մոբայլ ընկերությունը առաջարկում է ծառայություններ հետևյալ որոտներում՝



Կարճ հաղորդագրությունների առաքում

Եթե ունեք նոր ընկերություն կամ ապրանքանիշ և ցանկանում եք գովազդել այն, ապա Ձեզ կօգնի Նիկիտա Մոբայլ ՍՊԸ կարճ հաղորդագրությունների (SMS) առաքման SMSME ծառայությունը: Հաշված վայրկյանների ընթացքում Ձեր գովազդը տեղ կհասնի 1000-ից ավելի բաժանորդների:



VIBER առաքում

2017 թվականից «Նիկիտա Մոբայլ» ընկերությունն իրականացնում է հաղորդագրությունների օրինական առաքում Viber հավելվածի օգտատերերին:

Viber ծանուցումը թույլ է տալիս առաքել ծավալուն տեքստ և տեղադրել Ձեր նախընտրած նկարը ու լինքը:



PushPush հավելված

Կառավարվող ծանուցումների PushPush հավելվածը Հայաստանում թվային գովազդի բոլորովին նոր տեսակ է, որը թույլ է տալիս ինքնուրույն կառավարել ստացվող ծանուցումները:

Ներբեռնեք նոր PushPush հավելվածը և միշտ տեղեկացված եղեք Ձեզ հետաքրքրող ընկերությունների վերջին նորություններին:



0909 շուրջօրյա տեղեկատու

- 0909 շուրջօրյա տեղեկատուն մասնագիտացված զանգերի կենտրոն է ժամանակակից սարքավորումներով և ծրագրային ապահովմամբ:
- Տեղեկատուն ունի տվյալների հավաքագրման, մշակման և ներկայացման սեփական մեթոդները, ինչպես նաև ծառայությունների մատուցման յուրահատուկ մոտեցումները:
- 0909 կենտրոնը տրամադրում է ոչ միայն բիզնես տեղեկատվություն: Այստեղ Դուք կարող եք օգտվել նաև մեր հուսալի գործընկերների առաջարկած ծառայություններից:
- Կենտրոնի բաժանորդներին կտրամադրվի ցանկացած տիպի տեղեկատվություն, կիրականացվի փնտրում հարցումների հիման վրա կամ կպատվիրվի անհրաժեշտ ծառայությունը:



RBT

Դարձրեք հաճելի Ձեզ զանգահարողների սպասելաժամանակը՝ փոխեք Ձեր հեռախոսի սպասելազանգը սիրելի երգով, ժամանակակից հիթով կամ ծիծաղելի արտահայտություններով:




Կարճ համարներ և IVR

Նիկիտա Մոբայլ ՍՊԸ առաջարկում է տեղեկատվական և զվարճալի ծառայությունների տրամադրում կարճ համարների և ձայնային պորտալների միջոցով:



Ինտերնետ վիդեո համագործակցություն

Եթե Դուք ունեք պաշտոնական վիդեո ալիք կամ որևիցե տեսանյութի հեղինակային իրավունք, ապա մենք կարող ենք Ձեր ալիքը տեխնիկապես միացնել ճանաչված վիդեո հարթակին, և Ձեր տեսանյութի յուրաքանչյուր դիտումից Դուք կստանաք գումար:



4car.am կայք

Գրանցվելով 4car.am կայքում՝ վարորդը կարողանում է ստանալ խախտումների մասին ծանուցումներն առցանց և կարճ հաղորդագրությունների (SMS) միջոցով:



Բազմաբնակարան շենքերի կառավարմանը աջակցող համակարգ

Login.am-ը ունիվերսալ վեբ գործիք է, որը ստեղծվել է կարգավորելու համատիրության և բնակիչների աշխատանքը: Այլևս պետք չեն լինի վերելակի և մուտքի պատերին փակցված նորությունները և տեղեկատվությունը:

Միանալով Login.am համակարգին՝ յուրաքանչյուր համատիրություն հնարավորություն կունենա ստեղծել իր կայքը, որի միջոցով մշտական կապի մեջ կլինի բնակիչների հետ:



Զանգերի կենտրոն

Մենք առաջարկում ենք հենց Ձեր բիզնեսի համար մշակված բարձրակարգ զանգերի կենտրոն հետևյալ ծառայություններով՝

- Խոսակցության ձայնագրում,
- Տվյալների/վիճակագրության հավաքում, հաշվառում, կողավորում,
- Զանգահարող բաժանորդի մասին տեղեկատվության գրանցում,
- Էլ. հասցեի միջոցով խնդիրների փոխանցում համապատասխան բաժին,
- Համակարգի կոորդինատորի և վերահսկիչի կողմից խնդիրների լուծման ընթացքի կառավարում:



Բախտի բաժակ

Բախտի բաժակը բջջային հավելված է, որի միջոցով իրական բախտագուշակները գուշակություններ կանեն՝ սուրճի բաժակի նկարների հիման վրա:


Բարեգործություն


2009թ.-ից մեր ընկերությունը ներգրավված է բարեգործական բազմաթիվ ծրագրերում: Համագործակցություն է իրականացվել տարբեր հիմնադրամների հետ, ինչպես նաև կազմակերպվել են դրամահավաքներ անհատների համար:







ՇՆՈՐՀԱԿԱԼՈՒԹՅՈՒՆ

 ԶԶ, ք. Երևան, 0070, Ալեք Մանուկյան 9, սեն. 410

 Զեռ.:(+374) 010 512 888

 Ֆաքս: (+374) 010 512 087

 info@nikita.am